

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ

ԵՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

“ՍՖԻՆՔՍ,”

ՄԻՈՒԹԵԱՆ



ԵԳԻՊՏՈՍ

1936

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՀԱՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ
ԵՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

“ՍՖԻՆՔՍ”

ՄԻՈՒԹԵԱՆ

ՄՆՊ


- ԳԱԶԻՐԷ -



ԵԳԻՊՏՈՍ

1936

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



Ա.

Անուն, վայր եւ սեւույութիւն

ՅՕԴ. 1. — Կը կողմուի խնայողական համազործակցական միութիւն մը հետեւեալ անունով «Հայ Համազործակցական Խնայողական «Սֆինքս» Միութիւն» վայր ունենալով Կիզէ: Ընկերակցութիւնը 25 (քսանհինգ) տարի տեւողութիւն ունի, սյս պայմանաժամը կրնայ երկարաձգուիլ Ընդհանուր ժողովի որոշումով:

Բ. Նպատակ

Յօդ. 2. — Միութեան նպատակն է.

Ա. — Վարկ բանալ իր անդամներուն՝ անոնց պէտքերուն համաձայն:

Բ. — Զարգացնել և զօրացնել խնայողութիւնը և անտեսական կարողութիւնը իր անդամներուն մէջ:

Գ. — Կողմակերպել մտատկարարութիւնը

ի հաշիւ իրեն կամ իր անդամներուն ար-
դիւնաբերական գործին մէջ հարկ եղած
հում նիւթերու, ինչպէս նաեւ սննդեղէն-
ներու և կենսական անհրաժեշտութիւն
ներկայացնող այլեւայլ արտադրութիւննե-
րու :

Գ.— Կազմակերպել ի հաշիւ իրեն կամ
իր անդամներուն աժանագին բնակարան-
ներու համագործակցական կառուցումը :

Գ. Միջոցներ

ՅՕԴ. 3.— Միւլթիւնը իր միջոցները
կ'առանայ հետեւեալներէ .

Ա.— Անդամական բաժնեգիններէն
կազմուած գրամագլուխ .

Բ.— Հիմնադրամներ .

Գ.— Ի պահ գրուած գումարներ .

Դ.— Շահեր, մուտքի տուրք, եւայլն .

Ե.— Նուէրներ, կտակներ եւայլն :

ՅՕԴ. 4.— Բաժնեգիններէն գոյացած
գրամագլուխը անսահման է, իւրաքան-
չիւր բաժնեգինի անուանական արժէքը
100 (հարիւր) եգ. դահեկան է :

ՅՕԴ. 5.— Միութիւնը կը կազմէ կանոնաւորապէս երեք հիմնադրամներ .

Ա.— Պահեստի հիմնադրամ որ կը կազմուի զուտ շահուն 10 առ հարիւրով , նայնպէս և մուտքի գումարներով , որ կը ծառայէ վեասները գիմադրուելի :

Բ.— Ընկերակցութեան հիւանդ ու թշուառ անդամներու օգնութեան հիմնադրամ , որ կը կազմուի տարեկան զուտ շահուն 5 առ հարիւրով :

Գ.— Միութեան կոսկածելի տանելիքները գոցելու , որ կը կազմուի 5 առ հարիւրով :

ՅՕԴ. 6.— Ի պահ գրուած գումարները երկու տեսակ են . պայմանաժամով և առանց պայմանաժամի , առանց համար վըճարուելիք տակոսը կ'որոշէ Վարչական ժողովը :

ՅՕԴ. 7.— Իր գործողութիւններուն և բրած ծառայութիւններուն համար , Միութիւնը կ'ստանայ սակ , միջնորդչէք և սակոս , որոնց քանակը կ'որոշէ Վարչական

ժողովը, նուեւ մատակարարումի և այլ ձեռնարկներէ գոյանալիք շահերը :

ՅՕԴ. 8. — Բաժնեթուղթերը չեն կրնար աւանդ գրուիլ, փոխանցուիլ կամ գրաւի սակ առնուիլ, ժառանգորդները կրնան իրենց անուան փոխանցել մեւած անդամի մը բաժնեթուղթերը, և թէ Վարչական ժողովը ընդունի զիրենք իբր անդամ :

ՅՕԴ. 9. — Անդամ մը իր անդամակցութեան թուականէն առնուողն 3 (երեք) տարի անդամ մնալ ստիպուած է, երեք տարիէն աւաջ հրաժարող կամ վտարուող մը կը կորսնցնէ իր բարոյական և նիւթական բոլոր իրաւունքները, իսկ անդամակցութեան թուականէն երեք տարի վերջ հրաժարող կամ արտաքսուողին իր արժէթուղթերուն արժէքը կը վերադարձուի տարեկալսէն երեք ամիս յետոյ, գոյացած շահով կամ վնասովը, իսկ մահուան պարագային, մահուընէ երկու ամիս վերջ :

Դ. Անդամներ

ՅՕԴ. 10. — Միութեան անդամ կրնան

ըլլալ Գահիրէի և շրջակայքի բոլոր հայերը սասնց սեռի խտրութեան :

ՅՕԴ. 11.— Անդամագրուելի ուզող մը, ազերսագրով կը դիմէ Վարչութեան ժողովին, յայտարարելով որ ծանօթ է իրեն կանոնագրին արամագրութիւնները, անգամներու իրաւունքները և պարտականութիւնները և Միութեան վիճակը :

Վարչական ժողովը պարտական է 15 օրուան մէջ որոշել խնդրարկուին անգամ ընդունուելիը կամ ոչ և իմացնել անոր : Եթէ վարչութիւնը չի կտտարէ իր այս պարտականութիւնը, խնդրարկուն իրաւունք ունի բողոքելու քննիչ յանձնաժողովին, իսկ վերջինին որոշումներուն դէմ ընդհանուր ժողովին :

ՅՕԴ. 12.— Իւրաքանչիւր անգամ պարտաւոր է .

Ա.— Վճարելու միանուագ 10 եգ. դահեկան իրր մուտքի տուրք, զօրացնելու համար պահեստի գումարը :

Բ.— Արձանագրուելի և վճարել սա

նուազն սարեկան մէկ բաժնեգին, 100 եգ. գահեկան կանխիկ :

ԾԱՆՅԹ.— Անդամներու դիւրութեան համար մասնավեարով, շաբաթական առնուազն 2 Ե. Գ.ով կարելի է արձանագրուիլ 3 առ հարիւր տկոսով :

Գ.— Պատասխանատու ըլլալ Միութեան պարտքերուն և վնասներուն, արձանագրուած իր բաժիններուն անուանական արժէքին չափով :

Դ.— Միութեան ամէն տարուայ հաշուեկշիռէն անմիջապէս վերջ մինչև մէկ ամիս, բաժնեգիները կ'արժեն 100 եգ. գահեկան, իսկ անկէ վերջ դիմողները սուշոցած ժամանակաշրջանի համար 6 առ հարիւր տկոս կը վճարեն :

Ե.— Կանոնաւոր կերպով կարգադրել կամ հասուցանել Միութենէն իր կնքած փոխառութիւնները :

Զ.— Ներկայ գտնուիլ ընդհանուր ժողովներուն :

Է.— Գործադրել կանոնադրի արամադղ-

բուլթիւնները, վերջէն հրատարակուած մասնաւոր կանոնները և ընդհանուր ժողովի որոշումները, ինչպէս նաև ենթարկուելու Միութեան օրկաններուն օրինաւոր որոշումներուն :

Ը.— Սշխատելու, իր ուժերուն հասմեմտա Միութեան նպատակներու իրագործումին :

Թ.— Օրը օրին տեղեակ պահելու Միութիւնը, ուրիշ անդամներու կողմէ Միութեան հանդէպ ցոյց արուած անբարեխիղճ վերաբերմունքին և հասցուած վնասներուն :

ՅՕԴ. 13.— Իւրաքանչիւր անգամ իրաւունք ունի .

1.— Մասնակցելու ընդհանուր ժողովներու որոշեալ ձայնով, ըստ յօդ. 27ի :

2.— Ընտրելու և ընտրուելու իրր անգամ՝ վարչական, քննիչ յանձնաժողովներու և մայր դիւանի :

3.— Օգտուելու վարկով Միութենէն :

4.— Օգտուելու Միութեան շահերէն և մասնակի ձեռնարկներէն :

5.— Ի պահ զնելու Միութեան մօտ իր
աւելորդ գումարները, օգտագործելու հա-
մար :

ՅՕԴ. 14.— Անդամակցութիւնը կը
գաղբի :

Ա.— Վտարուժով .

Բ.— Գաղթելու պարագային .

Գ.— Մահով .

Դ.— Գրաւոր հրատարականով (բաժ-
նեգիններու արժէքը կը վերադարձուի,
նկատի առնելով յօդ. 9ր) :

ՅՕԴ. 15.— Միութենէն կը վտարուին
այն անդամները .

1.— Որոնք չեն գործադրեր կանո-
նագրին տրամադրութիւնները, մասնաւոր
կանոնները և ընդհանուր ժողովի որոշում-
ները :

2.— Որոնք չեն համակերպիր կառա-
վարիչ մարմիններու օրինաւոր որոշում-
ներուն :

3.— Որոնք Միութեան շահերուն դէմ
կը գործեն :

4.— Որոնք կառավարութեան կողմէ կը դատապարտուին ամօթալի արարքներու համար :

5.— Որոնք չեն կարգադրեր իրենց պարագիւրը Միութեան մօտ և տեղի կուտան դատարանով գանձուելու :

6.— Որոնք իրենց ընթացքով կ'արատաւորուին և կը վնասեն Միութեան վարկին :

ՅՕԴ. 16.— Անդամներու վտարումը կըկատարուի վարչութեան 2|3ի մեծամասնութեամբ : Որոշումը իր պատճառարանութեամբ կը գրուի ատենագրութեան տոմարին մէջ և կը տեղեկացուի վտարեալին ի դիմաց ստորագրութեան :

Տեղեկացուած օրէն վտարուածը կը կորսնցնէ իր անդամակցութեան իրաւունքները :

Անկանոնութեան համար կրնայ վտարուիլ, այս պարագային իրեն երեք շաբաթ առաջ լուր կը տրուի իր անկանոն ընթացքին համար, եթէ չուղղուի, կը վտարուի :

Վատարուածը՝ կրնայ բողոքել Քննիչ Յանձնաժողովի միջոցաւ Ընդհանուր ժողովին, առ առաւելին ճիշդեւ 30 օր, իրեն տեղեկացուած թուականէն:

307. 17.— Վախճանեալ անդամներու անդամակցութենէ դադարուածը՝ վարչութիւնը կը հաղորդէ անոնց ժառանգորդներուն գրուորոպէս ի դիմաց ստորագրութեան, իսկ գաղթած կամ հրաժարած անդամներուն՝ ուղղակի իրենց:

Ե. Գործ

307. 18.— Միութիւնը փոխատուութիւն կ'ընէ իր անդամներուն 6 առ հարիւրով, իսկ ոչ անդամներուն 9 առ հարիւրով, կործ պայմանաժամով, առ առաւելին 2 տարի, եթէ պէտք ըլլայ մասնաւոր պորագաններուն, վարչութիւնը կրնայ երկարաձգել այս պայմանաժամը:

307. 19.— Փոխատուութիւնները կը կատարուին ներկայացուած կամ արձանագրուած խնդրագրով, որու մէջ ցոյց

տրուած ըլլան անոնց քանակը, հատուցման ձեւը, վերջնական պայմանաժամը, երաշխաւորները և կամ գրաւի տակ կամ աւանդ ձգուելիք իրերը :

30Գ. 20.— Փոխատուութիւնը կը տրուի անդամներուն փոխան պարտաճուրհակի, իրենց բաժնեգիներուն չափ, իսկ աւելիին համար պէտք է երաշխաւորեն ուրիշ անդամներ :

30Գ. 21.— Անդամները մի միայն իրենց ունեցած բաժնեգիներու արժէքին չափով կրնան երաշխաւորել :

30Գ. 22.— Ոչ անդամներու փոխատուութիւն կ'ըլլայ միայն անդամներու երաշխաւորութեամբ և կամ աւանդ ձգուած գրաւի դրուած իրերով, կատարեալ ապահովութեան համար :

30Գ. 23.— Միութիւնը ի պահ կընդունի պայմանաժամով և աւանց պայմանաժամի գումարներ, ընդունուած սակի մը համաձայն (պայմանաժամովը՝ 1—3 տարի) :

ՅՕԴ. 24.— Միութիւնը կը կազմակերպէ, իր կամ իր անդամներուն հաշւոյն, սպառողական իրանութիւնը և կը մտատկարարէ սպրանքներ ժողովուրդին համար: Ասո՛ք կը կառավարուին Ընդհ. ժողովի կողմէ պատրաստուած մասնաւոր կանոնադրով մը:

Վաճառումները կը կատարուին միայն կանխիկ: Շահագիտական նպատակով վաճառումները արգիլուած են:

Զ. Կառավարում

ՅՕԴ. 25.— Միութիւնը կը կառավարուի հետեւեալ մարմիններով.

Ա.— Ընդհանուր ժողով.

Բ.— Վարչական ժողով.

Գ.— Քննիչ Յանձնաժողով:

Ընդհանուր ժողով

ՅՕԴ. 26.— Ընդհ. ժողովը կը վայելէ այն բոլոր իրաւասութիւնները որ անդամները ունին Միութեան գործերու մէջ և անոր օրինաւոր սրտչումները պար-

տաւորիչ են բաւոր անգամներուն և Միւս-
թեան մարմիններուն :

Ընդհ. ժողովը կ'ուշեկայ իր մէկ տար-
ւոյ մնայուն Դիւանը, բազկացած նախա-
գահէ և քարտուղարէ :

ՅՕԴ. 27. — Ամէն անգամ իրաւունք
ունի Ընդհ. ժողովի մէջ միայն մէկ ձայ-
նի՝ եթէ նոյն տարուան մէջ արձանա-
գրուած է 1-5 բաժին, 2 ձայնի՝ եթէ 6-10
բաժին և 3 ձայնի՝ 10, աւելիի : Նոյնպէս
իւրաքանչիւր անգամ կրնայ ներկայացնել
գրաւոր փոխանորդագրով մի միայն մէկ
անգամ :

ԾԱՆՅԹ. — Անչափահասները ձայն չու-
նին, մանչերը՝ 18, իսկ աղջիկները՝ 15էն
չափահաս կ'ընդունուին :

ՅՕԴ. 28. — Ընդհ. ժողովը կ'ըլլայ
կանոնաւոր և արտակարգ :

Կանոնաւոր Ընդհ. ժողովը կը գու-
մարուի Վարչական ժողովի թելադրու-
թեամբ և Դիւանի հրաւերով ամէն տարե-
գլխին :

Եթէ վարչութիւնը տարեգլխուն Ընդհ. ժողովի հրաւիրել չի թելադրէ, երկրորդ տմայն մինչեւ 15ը, Մայր Գիւտնը ազատ է և ստիպուած Ընդհ. ժողով հրաւիրել և վարչութենէն հաշիւ պահանջել :

ՅՕԴ. 29. — Ընդհ. ժողովը կ'զբաղի .

Ա. — կ'ընդունի վարչական ժողովի և Քննիչ Յանձնաժողովի տարեկան գործառնութեանց և հաշիւներու տեղեկագրերը և հաշուեկշիւը, ինչպէս նաև տարւոյն մէջ գոյացած շահերու և մնասններու բաշխումը, որոնք անդամին պարտքին կամ պահանջքին կարձանագրուին :

Բ. — կ'ընտրէ վարչութիւն և Քննիչ Յանձնաժողով :

Գ. — կ'արտօնէ կազմակերպութիւնը Միութեան ձեռնարկներու և այլ նոր նախաձեռնութիւնները :

Դ. — կը հաստատէ վարչական ժողովէն գծուած պիւտճէն :

ԾԱՆՅԹ. — Իւրաքանչիւր 3 արիւն անգամ մը ամեն անգամ իրաւունք ունի իրեն

բաժին ինկամ շահը առնել եւ կամ անով
բաժնեթուղթ գնել :

Ե. — Կ'որոշէ դատի ենթարկելու Վարչու-
թեան և Քննիչ Յանձնաժողովի անդամ-
ները և կ'ընտրէ Դատաստանական Մարմին :

Զ. — Կը փոխէ կամ կը լրացնէ կա-
նոնագիրը :

Է. — Կ'արտօնէ Միութեան դադարումը
(լուծումը) և կ'ընտրէ Հաշուեյարդար Մար-
մին :

Ը. — Ընդհանուր առմամբ ժողովը
կ'զբաղի օրակարգին մէջ դրուած բոլոր
հարցերով :

ԾԱՆՕԹ. — Կանոնագիրը փոխելու կամ
Միութեան դադարումի մասին Ընդհ. ժողո-
վի որոշումները՝ օրինաւոր են երբ անոնց
համար բռեարկած են Միութեան բոլոր ան-
դամներուն 2/3ը :

ՅՕԴ. 30. — Ընդհ. ժողովի արձանա-
դրութիւնը վաւերացուելով Դիւանի նա-
խագահէն և քարտուղարէն, մէկ օրինակը
կը յանձնուի Վարչութեան :

ՅՕԴ. 31.— Արտակարգ Ընդհ. ժողով
կը զուժարուի ամէն անգամ որ հարկ տես-
նուի, ի հարկին ան կը հրաւիրուի Մայր
Դիւանին կողմէ ս եւ է առթիւ, վարչու-
թեան, Քննիչ Յանձնաժողովի թեւադրու-
թեամբ և կամ ընդհ. անգամներու 1 | 10ին
պահանջով :

ՅՕԴ. 32.— Ընդհ. ժողովը կը զու-
ժարուի հրաւիրագրով, զրկուած՝ զուժար-
ման թուականէն տանուազն 15 օր առաջ,
հրաւիրագրին մէջ պէտք է յիշուած ըլլայ
օրակարգի բոլոր հարցերը և տեղը, հրա-
ւիրագիրը կ'ստորագրուի Ընդհ. ժողովի
Մայր Դիւանին կողմէ :

ԾԱՆՕԹ.— Երե երբեք Մայր Դիւանը
բերանայ իր պարսականութեան մեջ, իրեն
եղած դիմումեն առ առաւելն 15 օր վերջ,
վարչութիւնը եւ կամ Քննիչ Յանձնաժողովը
իբաւասու է Ընդհ. ժողով հրաւիրելու եւ
հրաւիրագիրները իրենց կողմէ 2 հոգի ստ-
րագրելու :

ՅՕԴ. 33.— Ընդհ. ժողովը օրինաւոր

է և կրնայ որոշումներ քուէարկել, եթէ ներկայ ըլլան անդամներուն կէսէն մէկ աւելին. եթէ պէտք եղած թիւով անդամներ ներկայ չեն, նիստը կը յետաձգուի 8 օրով, երկրորդ հրաւէրով մը և այն ատեն ժողովը օրինաւոր կը նկատուի որքան ալ անդամներ ներկայ ըլլան:

ՅՕԴ. 34.— Ընդհ. ժողովի որոշումները օրինաւոր են երբ քուէարկուած են ներկայ եզոզ անդամներու կէսէն մէկ աւելիով, հաւասար քուէներու պարագային՝ որոշիչ է նախագահի ձայնը. իսկ ընտրութեանց պարագային՝ վիճակով:

ՅՕԴ. 35.— Ընդհ. ժողովը կ'որոշէ վարչութեան գանձապահին մօտ օրուայ անմիջական պէտքի համար մնալիք դրամին առաւելագոյն չափը:

Վարչութիւն

ՅՕԴ. 36.— Վարչութիւնը կը բաղկանայ հինգ անդամներէ, ընտրուած Ընդհ. ժողովի կողմէ գաղանի քուէարկութեամբ, երեք տարուան համար:

Առաջին տարւոյ վերջը վիճակով կը դադրին երկուքը և տեղը կ'ընտրուին նորեկ երկու հոգի, նոյնպէս երկրորդ տարւոյն վերջ, դարձեալ վիճակով կը դադրի նախկիններէն մէկը, իսկ երրորդ տարւոյն վերջը, մնացեալ նախկին երկուքը և շարունակաբար. իւրաքանչիւր երեք տարի պաշտօնավարող անդամ ինքնաբերաբար կը դադրի պաշտօնավարելէ և իր տեղը նորը կ'ընտրուի:

Վարչութեան անդամները վերընտրելի են:

ՅՕԴ. 37.— Վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ նախագահ, քարտուղար, գանձապահ և փոխ-գանձապահ (հաւաքիչ) և հաշուապահ:

ՅՕԴ. 38.— Վարչութիւնը ժողովի կը հրաւիրուի նախագահին կողմէ և կամ առ նուազն ժողովի 3 անդամներուն կողմէ, երբ որ հարկ ըլլայ:

Նիստերը օրինաւոր են երբ ներկայ են 3 հոգի:

307. 39. — Վարչութեան ժողովի արձանագրութիւնները կանոնաւոր կերպով և մաքուր կը պահուին մասնաւոր տեսակի մը մէջ քարտուղարին կողմէ :

307. 40. — Վարչութիւնը կը տանի Միութեան բոլոր ընթացիկ գործերը :

307. 41. — Վարչութեան անդամները փոխադարձ երաշխաւորութեամբ հաւասարապէս պատասխանատու են Ընդհ. ժողովի աւաջ բարոյապէս և նիւթապէս :

307. 42. — Վարչութեան անդամները առանց վարձատրութեան ձրիապէս աշխատիլ ստիպուած են : Երբ Ընդհ. ժողովը նախատեսէ, Վարչութեան անդամները կը սկսին վարձատրութիւն ստանալ :

307. 43. — Վարչութեան անդամ մը երբ առանց բանաւոր պատճառի յաջորդաբար երեք անգամ բացակայի ժողովներէն, հրաժարած կը նկատուի : Հրաժարած Վարչութեան անդամին պատասխանատուութիւնը կը դադրի այն օրէն, երբ Քննիչ Յանձնաժողովին կողմէ ալ գրաւոր կերպով իմացարուի իրեն :

307. 44. — Ընկերակցութեան անուան
կ'ստորագրեն :

Ա. — Վարչութեան բոլոր անդամները ,
երբ ի հաշիւ Միութեան փոխառութիւն կը
կնքուի :

Բ. — Նախագահ , քարտուղար և գան-
ձապահ՝ մնացած բոլոր գործառնութեանց
միջոցին :

Գ. — Վարչութեան կողմէ փոխանոր-
դուած անձեր :

307. 45. — Վարչական ժողովի իրա-
ւասութիւնները և պարտականութիւններն
են .

1. — Կ'ընդունի կամ կը վտարէ ան-
դամները :

2. — Կ'որոշէ Ընդհ. ժողովի օրակար-
գերը :

3. — Կը կազմէ տարեկան հաշուեկշի-
ռը , շահ ու վնասի հաշուեկշիռը և իր գոր-
ծունէութեան ակզեկագիրը :

4. — Կ'որոշէ դրամարկղին մէջ մնալիք
դրամէն աւելին ո՛ր պանքան (դրամատուն)
դնելը :

5. — Կ'որոշէ դատի ենթարկել այն ան-
դամները որ չեն կարգադրեր իրենց պարտ-
քերը :

6. — Կը պատրաստէ հարկ եղած ներ-
քին կանոնադրեր զանազան ծառայութիւն-
ներու և ձեռնարկներու համար և կ'են-
թարկէ Ընդհ. ժողովի հաւանութեան առ-
ի վաւերացում :

7. — Կը կնքէ պայմանագրութիւններ
ի հաշիւ Միութեան :

8. — Կը ղեկավարէ թղթակցութիւն-
ները, կը հսկէ անոնց և հաշուեպահու-
թեանց վրայ :

9. — Ներկայ կը գտնուի հաշուեքննու-
թեան և կուտայ բոլոր դիւրութիւնները և
բացատրութիւնները քննիչներուն և կ'ստո-
րագրէ քննական արձանագրութիւնները,
զորս կը կարգացուին Ընդհ. ժողովին մէջ :

10. — Ջանադիր կ'ըլլայ ընդհանուր
առմամբ Միութեան յառաջդիմութեան և
կը կատարէ բոլոր գործողութիւնները ա-
նոր յաջողութեան համար, կանոնադրի
արամագրութեանց համաձայն :

ՔՆՆԻՅ Յանձնաժողով

ՅՕԴ. 46.— Քննիչ Յանձնաժողովը կը բաղկանայ երեք անդամներէ, ընտրուած տարեկան Ընդհ. ժողովի զազանի քուէադակութեամբ, անոնք, իրենց մէջէն կ'ընտրեն նախագահ և քարտուղար :

Աւաջին երկու տարիները վիճակով կը դառնին 2 անդամները և յետոյ իւրաքանչիւր երեք տարի պաշտօնավարող անդամը ինքնաբերաբար դադրած կ'ըլլայ :

ՅՕԴ. 47.— Վարչական ժողովէն ելլող անգամ մը միայն մէկ տարի վերջ քննիչ կրնայ ընտրուիլ : Քննիչ Յանձնաժողովի անդամները վերընտրելի են :

ՅՕԴ. 48.— Քննիչ Յանձնաժողովի անդամները չեն կրնար մօտիկ սզգականական կամ խնամիրական կապեր ունենալ վարչական անդամներուն հետ :

ՅՕԴ. 49.— Նախագահի նախաձեռնութեամբ կամ մնացած երկու անդամներու պահանջով, Յանձնաժողովը կանոնաւոր ժողովի կը հրաւիրուի 3 ամիսը անգամ մը և

ամէն անգամ երբ պէտք զգացուի, որոշումները մեծամասնութեամբ կը տրուին և օրինաւոր են, երբ ժողովները տեղի կ'ուսենան առ նուազն 2 հոգիով, այս պարագային անոնց որոշումները պէտք է միաձայնութեամբ տրուած ըլլան:

ՅՕԴ. 50.— Քննիչ Յանձնաժողովը կը հսկէ ներկայ կանոնադրի, ներքին կանոնադրերու և ընդհանուր ժողովներու որոշումներուն ճշդիւ գործադրութեանց քննելով Վարչութեան և անոր մարմիններուն գործերը, Միութեան ունեցած ամբողջական գործունէութիւնը: Ան կրնայ օգտագործել մասնագէտներ իր քննութեանց պահուն:

ՅՕԴ. 51.— Քննիչ Յանձնաժողովի անդամները ձրի կ'աշխատին մինչեւ Ընդհ. ժողովին վճարում պէտք տեսած շրջանը:

ՅՕԴ. 52.— Յանձնաժողովը կը քննէ.

Ա.— Դրամարկղի պարունակութիւնը, արժէքաւոր թուղթերը, ապրանքները, նիւթերը և կալուածները:

Բ. — Ընթացիկ գործողութիւնները :

Գ. — Տարեկան հաշուեկշիռը , շահ ու վնասի հաշիւները և տարեկան համարատուութիւնը :

Դրամարկղի պարունակութեան և ընթացիկ գործողութիւններու քննութիւնը պէտք է կատարուի առ առաւելն Յ ամիսը անգամ մը , իսկ տարեկան հաշիւներու քննութիւնը տարւոյն վերջը :

Քննութեանց արդիւնքին համար կը պատրաստուի տեղեկագիր մը և կը յանձնուի Ընդհ. ժողովի գլխանին :

307. 53. — Քննիչ Յանձնաժողովը կ'ուեննայ իր ժողովներու արձանագրութեան տետրակը , ուր կ'ընդօրինակուին տեղեկագրերը :

307. 54. — Քննիչ Յանձնախումբը ազատ է ուզած օրը , ուզած ժամուէն դրամարկղը կնքել և հաշիւները քննել , սեւէ անկարգութեան և կամ զեղծութի պարագային , անմիջապէս Մայր Դիւանին կը դիմէ իր տեղեկագրով , ան ալ արտակարգ Ընդհ. ժողով կը գումարէ :

ՅՕԴ. 55.— Քննիչ Յանձնաժողովը պարտաւոր է ներկայացնելու Ընդհ. ժողովին տեղեկագիր՝ գործերու, գործողութիւններու, հաշիւներու և տարեկան հաշուեկշիռի վիճակի մասին, առանց այս տեղեկագրին Ընդհ. ժողովը չի կրնար պատասխանատուութենէ ազատ արձակել Վարչութիւնը և Քննիչ Յանձնախումբը:

ՅՕԴ. 56.— Քննիչ Յանձնաժողովը իր րաւունք ունի իր ամբողջ կազմով և փոխանորդով խորհրդակցական ձայնով ներկայ ըլլալու Վարչութեան ժողովներուն:

Է.

Հաշուեկշիռ, շահ եւ վնաս

ՅՕԴ. 57.— Միութեան գործողութեան տարին կ'սկսի իւրաքանչիւր տարի Յունուար 1ին և կը վերջանայ Դեկտեմբեր 31ին, Դեկտեմբեր 31ին պէտք է փակել հաշիւները, կազմել տարեկան հաշուեկշիւը և շահ ու վնասի հաշուեկշիւը, որոնք Քննիչ Յանձնաժողովին կողմէ քննուելով

կը դրուի անդամներու տրամագրութեան տակ, Ընդհ. ժողովի գումարումէն 7 օր առաջ:

ՅՕԴ. 58.— Տարեկան հաշուեկշիռը կը կազմուի Միութեան 31 Դեկտեմբերին ունեցած գոյք ու պարտքին հիման վրայ, տարեկան հաշուեկշիռին կազմութեան պահուն պէտք է նկատի առնել հետեւեալ կանոնները.

1.— Միութեան գոյքը պէտք է հաստատուած ըլլայ իւրաքանչիւր առարկայի, տրփէքի կամ պարտաթուղթի նոյն ժամանակի համապատասխանող գումարին վրայ, եթէ երբեք շուկայի գինը աւելի բարձր է, այն ստեն կ'ընդունուի անոնց Միութեան արժած գինը:

2.— Միութեան կասկածելի առնելիքները պէտք է արձանագրուած ըլլան անոնց հաւանական գանձումին համեմատ, իսկ բոլորովին անգանձելիները պէտք է ցոյց տալ:

3.— Դրամագլուխները, հիմնադրամ-

ները և Միութեան գանազան պարտքերը պէտք է պարտքին մէջ ամբողջութեամբ գրուին :

307. 59. — Տարուան վերջ ընդհանուր շահէն զեղչելէ յետոյ .

Ա. — Պիւտճէի և այլ ծախքերը .

Բ. — Պարտքերու տոկոսները .

Գ. — Շարժուել և անշարժ կալուածներու ամօրթիսըմանը անոնց արժէքին համեմատ .

Դ. — Համապատասխան առնուած տոկոսները, յաջորդ ատրուան համար արուած փոխատուութեանց, արձանագրուած և գանձուած շահերը, կը մնան զուտ շահը կամ փնտր :

307. 60. — Զուտ շահը կը բաշխուի այսպէս .

Ա. — 10 առ հարիւր պահեստի հիմնադրամ .

Բ. — 5 առ հարիւր հիւանդ կամ աղքատ անդամներու օգնութեան հիմնադրամ .

Գ. — 5 առ հարիւր կասկածելի առնելիքները գոցելու հիմնադրամ .

Դ. — 80 առ հարիւրը կը բաշխուի բաժնեգիններուն վրայ :

ԾԱՆՅԹ. — Միութեան զանազան ձեռնարկներէն զոյացած շահը կը բարչուի Միութեան շահին վրայ եւ յետոյ է որ բաշխումները տեղի կ'ունենան :

ՅՕԴ. 61. — Միութեան հիմնադրումները անբաժանելի են . միայն լուծման կամ քայքայման ժամանակ երեք հայ յարանուանութեանց պետերու տրամադրութեան տակ կը դրուին իբր անձեռնմխելի գումար եւ միայն անոր տոկոսը կը յատկացնեն կրթական հաստատութեանց , մինչեւ ուրիշ նոր հայ համագործակցական միութեան մը հիմնադրումը , երբ այդպիսի միութիւն մը կազմուի , էը յանձնեն անոր իբր հիմնադրամ , պայմանաւ որ անձեռնմխելի մնայ : Առաջնորդարանները՝ միայն Միութեան լուծման ժամանակ ներկայ անդամներուն համայնքային հանգամանքին չափով կամ համեմատութեամբ իրաւունք ունին օգտուելու տոկոսէն : Իսկ մնասի պարագային ,

եթէ երբեք պահեստի հիմնադրամը չի բաւէ ,
կարելի է միւս հիմնադրամները օգտա-
գործել :

Ը.

Ընդհանուր կարգադրութիւններ


ՅՕԴ. 62. — Այս Ծրագր-Կանոնագիրին
մէջ չնախատեսուած սեւէ պարագայի համար
նկատի կ'առնուին համագործակցական ըն-
կերութեանց ու վաճառականական օրէնք-
ներու արամագրութիւնները :

ՅՕԴ. 63. — Միութիւնը կնիք մը ունի
հետեւեալ պարունակութեամբ. « Հայ Հա-
մագործակցական Խնայողական Սֆինքս
Միութիւն » , մէջտեղը՝ սֆինքս , վրան՝ թը-
ւական 1936 , տակը՝ Կիզէ :

ՅՕԴ. 64. — Միութիւնը կը հրատա-
րակէ իր տարեկան հաշիւները՝ տեղեկա-
գրով միասին՝ տեղական հայ թերթերուն
մէջ և կամ տունձին հրաշարակութեամբ :

Ներկայ Ծրագիր-Կանոնագիրը յօդուած
3 ա յօդուած քննուած և վաւերացուած է

Հիմնադիրներու ժողովին կողմէ, 25 Հոկ-
տեմբեր 1936ին:



ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

ԲԱՐՍԵՂ ԴԱԻԻԹԵԱՆ
ԳԷՈՐԳ ԳԷՈՐԳԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՃԻԶՄԷՃԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱԼԹՈՒՆԵԱՆ
ԵԶՆԻԿ ՎԵՑԻԿԵԱՆ
ԻԳՆԱՏԻՈՍ ԻԻ ՎԷԶԵԱՆ
ԼԱԻՐԷՆ ԿԷՐԿԷՐԵԱՆ
ԼԵՒՈՆ ԲՈԼԱՏԵԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ՍԸՎԱԶԼԵԱՆ
ՅԱԿՈԲ ԳԱՍՍՊԵԱՆ
ՅԱԿՈԲ ԹՈՐՈՍԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՍԴՃԵԱՆ
ՇԱՀԷՆ ՀԷԼՎԱՃԵԱՆ
ՊԹՂՈՍ ԲԱՐՄԱՔՍԸԶԵԱՆ
ՍԱՄՈՒԷԼ ԿՈՐԿԻՍԵԱՆ
ՍՏԵՓԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՆՇԱՆ ԹԻԻՖԷՆԷՃԵԱՆ